Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ

ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ

Որքան հեռանում ենք դարակազմիկ պատմական անցքերից, այնքան ավելի խորն ենք ըմբռնում Անդրկովկասի ժողովուրդների ճակատագրում Վ. Ի. Լենինի խաղացած դերը։ Այդ դերն այնքան մեծ է, միաժամանակ այնքան հանրահայտ, որ դժվար է հավակնել նոր խոսք ասելու այդ մասին։ Ուստի մենք կանգ կառնենք միայն մի քանի հարցերի վրա, որոնք առնչվում են ինդրո առարկա թեմային և որոնք վճռորոշ նշանակություն ունեն ավելի խորն ըմբռնելու Վ. Ի. Լենինի դերն Անդրկովկասի բանվորական ու ազգային-ազատագրական շարժումների ծավալման և երկրամասի ժողովուրդների ազգային ու սոցիալական վերածննդի գործում։

Տակավին անցյալ դարի 90-ական թվականների կեսերին, երբ Ռուսաստանում սկիզբ առավ բանվորական հեղափոխական շարժումը, նրա արդեն հանաչված առաջնորդ Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս Անդրկովկասի բանվորական հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումներին՝ որպես համառուսական ազատագրական շարժման գլխավոր հանգույցներից մեկի։ Թերևս նաև դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ նա իր հեղափոխական գործունեության վաղ շրջանից ի վեր կապեր է հաստատում Անդրկովկասի բանվորական շարժման գործիչների հետ։ Դեռևս «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ (1899) Վ. Ի. Լենինը պարմանալի մանրակրկիտությամբ ուսումնասիրել է նաև Անդրկովկասի էկոնոմիկան և հանճարեղ ընդհանրացումներ կատարել նրա տնտեսական ու քաղաքական զարգացման հեռանկարների մասին։

Վ. Ի. Լենինի հետաքրքրությունն Անդրկովկասի նկատմամբ ակադեմիական չէր։ Նրան զբաղեցնում էր երկրամասի տեղն ու դերը համառուսական հեղափոխական շարժման մեջ։ Վ. Ի. Լենինը հեռու էր մանրբուրժուական Ռուսաստանում զուտ պրոլետարական հեղափոխության հնարավորության գաղափարից։ Նա ընդգծում էր, որ Անդրկովկասի, ինչպես նաև Ռուսաստանի՝ կապիտալիստական առումով չզարգացած մյուս ազգերի մեջ «դեռևս օբյեկտիվորեն կան համազգային խնդիրներ, այն է՝ դեմոկրատական խնդիրներ...»[1]*, որոնք իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում չէին կարող դուրս մնալ էպոխայի պատմական ոգուց։ Այդ խնդիրների անտեսումը պառակտում կարող էր առաջացնել բանվորական և ազգային-ազատագրական շարժումների միջև։ Պատահական չպետք է համարել այն, որ Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները վերելք ապրեցին հենց անցած դարի 80—90-ական թվականներին, այսինքն այն ժամանակ, երբ Ռուսաստանը, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գնահատմամբ, արդեն*

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 66։

հանդիսանում էր բանվորական «հեղափոխական շարժման առաջավոր ջոկատը Եվրոպայում»[2]։

Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ իմպերիալիզմից բխող ցնցումների դարաշրջանում ռուսական կայսրության ձնշված ազգերի ազգային-ազատագրական շարժումները բարձրանում էին բանվորական հեղափոխական շարժման կապակցությամբ[3], որ վերջինս էր խթան հաղորդում առաջինին։ Այս խիստ կարևոր հանգամանքը երբեք չի կարելի մոռացության տալ, երբ խոսքը վերաբերում է Ռուսաստանում ծավալված ազգային-ազատագրական շարժումներին։ Ռուսական կայսրության և ոչ մի ձնշված ժողովուրդ ի վիճակի չէր մեկուսի, համառուսական ազատագրական շարժումից դուրս լուծել իր ազգային-ազատագրական պայքարի խնդիրները։ Բանվորական և ազգային-ազատագրական շարժումների անքակտելի միասնության լենինյան գաղափարն առաջնակարգ դեր խաղաց հեղափոխության զարգացման հետագա ամբողջ ընթացքում։ Պրոլետարներ և ճնշված ազգերի աշխատավորներ, միացե՛ք։ Այս էր լենինյան այդ գաղափարի իմաստը, որը լրացնում էր «Կոմունիստական մանիֆեստիս» հոչակավոր կոչը, հանդիսանալով խոշոր ներդրում մարքսիզմի տեսական գանձարանում։

Պատմական զարգացման տարբեր փուլերում տարբեր դասակարգերի շարժումն է հանդիսացել հասարակական հնարավոր առաջընթացի գլխավոր զսպանակը։ Վ. Ի. Լենինը մատնանշում է, որ ֆեոդալական-միահեծանական ուժերի դեմ մղվող պայքարում ազգային-ազատագրական շարժումները կարող են լինել սոսկ բուրժուա-դեմոկրատական շարժումներ, որոնք պրոգրեսիվ բնույթ են ունենում[4]։ Բայց իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում, երբ բացահայտորեն փոխվում է դասակարգային ուժերի փոխհարաբերությունը և ավելի ցայտուն է դրսևորվում ազգային կռվի դասակարգային բնույթը[5], բուրժուազիան ազգային-ազատագրական շարժման մեջ դառնում է ռեակցիոն։ Այդ ժամանակ, նշում է Վ. Ի. Լենինը, նա «շահագիտական նպատակներով գրգռում է ազգային շարժումների իդեոլոգիա, ջանալով փոխադրել այն իմպերիալիզմի դարաշրջանը, այսինքն բոլորովին այլ դարաշրջան»[6]։

Անդրկովկասի օրինակով կարելի է դիտել, որ այս դարաշրջանում ազգային-ազատագրական շարժման սոցիալական բազան ընդլայնվում է, նրա մեջ ընդգրկվում են աշխատավորական զանգվածների ավելի լայն շրջաններ, ազգային բուրժուազիան կորցնում է իր երբեմնի առաջադիմական նշանակությունը, հետին պլան է մղում նացիոնալիզմի բովանդակության համադեմոկրատական տարրը ընդդեմ իմպերիալիստական ձնշման, դառնում խոշընդոտ շարժման զարգացման համար։ Վեր բարձրացող, առաջավոր դասակարգից բուրժուազիան, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, դառնում է «վայր իջնող, անկումնային, ներքնապես մեռած, ռեակցիոն դասակարգ»[7]։ Ազգային-ազատագրական շարժումների դրոշը իր ձեռքն է վերցնում բանվոր դասակարգը։

---

2 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 19, с. 305.
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 329—330։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 291։
5 Ս. Շահումյան, Եկած, հ. 2, էջ 406։
6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 168։
7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 177։

Պատմական պրոցեսի լենինյան դիալեկտիկական այս մոտեցումը բանալի է հանդիսանում ճիշտ հասկանալու և գնահատելու Անդրկովկասի ազգային բուրժուազիայի և նրա քաղաքական կուսակցությունների տեղն ու դերը տարբեր դարաշրջաններում ծավալված ազգային-ազատագրական շարժումների մեջ։ Այս մեթոդից հեռանալը միշտ էլ տարել է դեպի ազգային շարժումների ֆետիշացում, ազգային հարցի պրոլետարական լուծման գործում սոցիալական պայքարի դերի նվազեցում, բանվորական հարցի հանդեպ ազգային հարցի ստորադաս նշանակության ժխտում։

Անգնահատելի է Վ. Ի. Լենինի դերը Անդրկովկասում բանվորական հեղափոխական շարժումների ծավալման և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծման գործում։

XIX դ. վերջը և XX դ. սկիզբը Ռուսաստանում բնորոշվում են հեղափոխական ճգնաժամի հասունացմամբ։ Ցարիզմը ձգտում էր կանխել փոքր ազգերի աշխատավոր զանգվածների դեռևս տարերային պայքարի հնարավոր միավորումը Ռուսաստանի հեղափոխական բանվորական շարժման հետ, մի շարժում, որը 90-ական թվականների կեսերից արդեն հանդես էր եկել՝ իր որոշակի քաղաքական և սոցիալական իդեալներով։

Անդրկովկասում պրոլետարիատի շատ թե քիչ կազմակերպված ջոկատի բացակայությունը, ազգայնական ուժեղ տենդենցների առկայությունը, որ հատկապես պայմանավորվում էր ցարիզմի ազգահալած քաղաքականության ուժեղացմամբ և արթնացող ազգային բուրժուազիայի ձգտմամբ՝ ունենալու կապիտալիզմի պահանջները բավարարող ազգային պետություն, բարդացնում էին պրոլետարական գաղափարախոսության զարգացման պրոցեսը։ Այս էտապում Ռուսաստանի նշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներն ուղղված էին ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի և ինքնակալության դեմ։ Պրոլետարիատը պաշտպանում էր այդ շարժումների համադեմոկրատական պահանջները, միաժամանակ հանդես գալով ազգային բուրժուազիայի նացիոնալիստական ձգտումների դեմ։ Վ. Ի. Լենինի գլխավորած ռուսական սոցիալ-դեմոկրատիայի խոշորագույն ծառայությունն այն էր, որ նա կարողացավ այսպիսի պայմաններում իր ազդեցության տակ առնել երկրամասի առաջավոր բանվորներին, դաստիարակել և կոփել նոր դարաշրջանի ոգին մարմնավորող հեղափոխական գործիչներ (Մ. Ցխակայա, Բ. Կնունյանց, Ստ. Շահումյան, Ի. Ստալին, Լ. Կեցխովելի, Ս. Սպանդարյան, Պ. Ջափարիձե, Մ. Ազիզբեկով և ուրիշներ), որոնք էլ երկրամասում ստեղծեցին լենինյան-իսկրայական տիպի առաջին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները։ Այդպիսի կազմակերպություններից էր «Հայ սոցիալ դեմոկրատների միությունը», որի ստեղծումն ու նրա «Մանիֆեստի» հրատարակումն «ամբողջ հոգով» ողջունեց Վ. Ի. Լենինը՝ «Իսկրայի» № 33-ում տպագրած հոդվածում։ Նա հատկապես ընդգծեց ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու Միության ուշագրավ փորձը։

Բանվորական շարժման և սոցիալիստական գաղափարների ազդեցության տակ գնալով խորանում էր ազգային-ազատագրական շարժման դասակարգային բնույթը, որը և հիմք էր հանդիսանում այդ շարժումը աստիճանաբար դուրս բերելու բուրժուական նացիոնալիզմի ազդեցությունից։

1903 թ. բոլշևիզմի՝ որպես քաղաքական մտքի հոսանքի երևան գալը, Վ. Ի. Լենինի ստեղծած նոր տիպի կուսակցության առաջացումը— լենինիզմի

խոշորագույն հաղթանակն էր միջազգային օպորտունիզմի, նացիոնալիզմի և մեծապետական շովինիզմի նկատմամբ։ Այն նշանավորեց արմատական հեղաշրջում ոչ միայն հեղափոխական բանվորական շարժման, այլև ռուսական կայսրության ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման մեջ։ Կուսակցության առաջին ծրագրում ազգային հարցի պրոլետարական դրվածքը հիմք հանդիսացավ ճնշված բոլոր ժողովուրդներին Վ. Ի. Լենինի ստեղծած կուսակցության շուրջը համախմբելու, ազգային-ազատագրական շարժումները պրոլետարական հունի մեջ դնելու համար։ Այս կապակցությամբ ուշագրավ է Վ. Ի. Լենինի գրված դիրքը ցարական կառավարության 1903 թ. հունիսի 12-ի օրենքի նկատմամբ, որով հայկական եկեղեցական գույքը հանձնվում էր կառավարության տնօրինությանը։ Այդ օրենքի ընդունումն առաջ էր բերել հայ և երկրամասի մյուս ժողովուրդների խոր զայրույթն ու ելույթը ցարիզմի դեմ։ «Իսկրայում» այդ առթիվ տպագրելով Բ. Կնունյանցի «Նոր կոդոպուտ» հոդվածը Վ. Ի. Լենինն այն ուղեկցել էր մի նոթով, որով Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատների տակտիկան օրինակ էր ծառայեցնում «թե գործնականում ինչպես պետք է կիրառել մեր ծրագրի այն կետը, որը պահանջում է ճանաչել յուրաքանչյուր ազգի ինքնորոշման իրավունքը»[8]։

Ֆ. Էնգելսը դեռևս 1872 թ. արտահայտել է այն միտքը, թե բանվորական շարժման մեջ իսկական ազգային գաղափարները միաժամանակ իսկական ինտերնացիոնալ գաղափարներ են[9]։ Սա էր այն օբյեկտիվ հիմքը, որը կապիտալիզմի էպոխայում նպաստում էր ազգերի բռնի միավորման տենդենցի ոչնչացմանը և ազգային-ազատագրական շարժումները բանվորական հեղափոխական շարժման հետ միաձուլմանը։ Ինտերնացիոնալիզմը չի հակասում, այլ, ընդհակառակը, պայմանավորում է իսկական ազգայինի հաղթանակը։ Ռուսական երեք հեղափոխությունների փորձը այդ է ապացուցում։

Վ. Ի. Լենինը սկզբունքային նշանակություն էր տալիս ազգային հարցի պրոլետարական լուծմանը։ Նույնիսկ վտարանդության տարիներին նա ուշիուշով հետևում էր ազգային հարաբերությունների ընթացքին Ռուսաստանում և խնդրում էր Ստ. Շահումյանին «անպայմանորեն ավելի շատ նյութեր ուղարկել ազգային հարցի մասին Կովկասում...»[10]։ Վ. Ի. Լենինը իր խորհուրդներով ղեկավարում և ուղղություն էր տալիս Կովկասի բոլշևիկների գործունեությանը։ Եվ չնայած ցարիզմի ազգահալած քաղաքականության մթնոլորտում տարբեր դասակարգերի և ազգերի տարատեսակ քաղաքական խմբավորումների միահյուսումը երկպառակություն էր սերմանում Անդրկովկասի պրոլետարական միջավայրում, բոլշևիկները կարողանում էին հաղթահարել ցարիզմի ու բուրժուական նացիոնալիզմի դիմադրությունը և ամուր պահել բազմազգ պրոլետարիատի ինտերնացիոնալ միասնությունը։ Վ. Ի. Լենինը բազմիցս ընդգծել է այդ փաստը։ Նա բոլշևիկներին այնպիսի խորը հավատ էր ներշնչել պրոլետարիատի գործի հաղթանակի նկատմամբ, որ նրանց չէին վհատեցնում ոչ բանտն ու աքսորը, ոչ հալածանքն ու տևողը։ Ռեակցիայի տարիներին Ստ. Շահումյանը իր նամակներից մեկում գրում էր, թե Կովկասի բոլշևիկներին «տառապիորեն խաչում են, ամեն կողմից թքակոծում

---

8 «Искра», 1(14). X. 1903.
9 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 33, с. 374.
10 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 35, էջ 104։

են, ստորացնում... բայց մենք չենք վհատվում։ Հավատը դեպի ապագան և սերը դեպի մեր գործը անսպառ նոանդ է ներշնչում մեզ»[11]։

Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի շարքերի միասնությանը խոշոր վտանգ էր սպառնում «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» լոզունգը, որն իր մեջ, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, պարունակում էր բուրժուական նացիոնալիզմի «ամեն տեսակի բիրտ ու նուրբ արտահայտությունները»[12]։ Վ. Ի. Լենինը կենաց ու մահու կռիվ էր հայտարարել այդ տեսության կրողների դեմ։ Նա հատուկ սրությամբ ընդգծում էր, որ «ընդդեմ իմպերիալիզմի, ինտերնացիոնալ սոցիալիստական հեղափոխության համար պայքարն անհնարին է առանց ազգերի ինքնորոշման իրավունքը ճանաչելու...»[13]։

Այն հանգամանքը, որ պատմական խիստ կարճ ժամանակահատվածում բոլշևիկները կարողացան կամուրջ գցել բանվորական հեղափոխական, ազգային-ազատագրական և ընդհանուր դեմոկրատական շարժումների միջև ու դրանք ուղղել ցարիզմի ռազմաֆեոդալական մեքենայի դեմ, վկայում է, որ Վ. Ի. Լենինի գաղափարները մոտ ու հարազատ էին բազմազգ Ռուսաստանի աշխատավորական ամենալայն զանգվածներին։ Դա էլ, վերջին հաշվով, ապահովեց պրոլետարական շարժման հաղթանակը ցարիզմի և նրան փոխարինելու եկած ժամանակավոր կառավարության նկատմամբ։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը, որը XX դ. ամենակարևոր իրադարձությունն է, ռուսական նախկին կայսրության ժողովուրդների միջև դրեց բոլորովին նոր տիպի փոխհարաբերությունների սկիզբը, որոնց հիմքում ընկած էին ժողովուրդների իրավահավասարության ու սուվերենության, նրանց ազատ զարգացման, բոլոր ազգերի կամովին ինքնորոշման, ազգային և ազգային-կրոնական ամեն տեսակի արտոնությունների սահմանափակումների վերացման լենինյան ազգային քաղաքականության սկզբունքները։ Նորաստեղծ սովետական իշխանության քաղաքականությունն ազգային հարցում ուղղված էր այդ սկզբունքները կյանքում իրագործելու խնդրին։

Հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասը վերածվեց դասակարգային պայքարի և միջազգային ընդհարումների բարդ միահյուսման ասպարեզի։ Հակամարտության մեջ մտան երկու հիմնական ուժեր. մի կողմից երկրամասի բանվորական հեղափոխական ու ազգային-ազատագրական շարժումները, որոնց պաշտպանում էր Սովետական Ռուսաստանը, իսկ մյուս կողմից ազգայնական հակահեղափոխությունը, որին, ռուսական սպիտակգվարդիական բանդաների հետ միասին, օգտագործում էին արևմտյան իմպերիալիստները՝ երկրամասը Սովետական Ռուսաստանից անջատելու և գաղութացնելու նպատակով։ Թերմանա-Թուրքական բլոկի բացահայտ ռազմական և Անտանտի իմպերիալիստների քողարկված ինտերվենցիան առժամանակ ուժեղացրին ազգայնական հակահեղափոխության դիրքերը։

Վ. Ի. Լենինի ղեկավարած Սովետական Ռուսաստանի կառավարության քաղաքականությունը Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ սկզբունքային նշանակություն ունեցավ նրանց մղած ազատագրական պայքարի հետագա ամբողջ ընթացքի համար։ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը նախ

11 Ս տ. Շ ա հ ու մ յ ա ն, նշվ. հ. 2, էջ 108։
12 Վ. Ի. Լ ե ն ի ն, երկեր, հ. 19, էջ 121—122։
13 Վ. Ի. Լ ե ն ի ն, երկեր, հ. 21, էջ 402։

Լ առաջ 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի» մասին իր դեկրետով ճանաչեց հայ ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը՝ Թուրքիայի կողմից օկուպացված մարդկերը բռնությամբ իր իշխանության տակ պահելու քաղաքականությանը հակադրելով հայ ժողովրդի լիակատար ազատագրման քաղաքականությունը։ Ժողկոմխորհը հանդես էր գալիս Թուրքիայի կողմից անեքսիայի ենթարկված Արևմտյան Հայաստանը հայերին վերադարձնելու վճռական պահանջով։

Հատկանշական է, որ դեկրետն ընդունելու հաջորդ օրը, 1917 թ. դեկտեմբերի 30-ին, Բրեստ-Լիտովսկում սովետական պատվիրակությունը հանդես է գալիս հայտարարությամբ, որտեղ ըստ էության կրկնվում են բոլոր այն պահանջները, որոնք որպես բացարձակ հրաշխիքներ անհրաժեշտ էին «Թուրքահայաստանի» ազատ ինքնորոշման համար[14]։

Այդ դեկրետի ընդունումն ինքնին նշանակում էր 1915—1916 թթ. Արևմտյան Հայաստանում Թուրքական բարբարոսների ձեռնարկած՝ հայերի անանախադեպ գենոցիդի դատապարտում։ Միաժամանակ դեկրետը վկայում էր Սովետական Ռուսաստանի անշեղ ձգտումը՝ օգնելու բռնապետի ենթարկված հայ ժողովրդի տարաբախտ բեկորներին՝ վերադառնալու իրենց հայրենի օջախը և Թուրքական լծից անկախ պետականություն ստեղծելու։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ ստեղծված ազգությունների ժողովրդական կոմիսարիատն իր առջև դրված կարևորագույն խնդիրներից էր համարում ազգային հակահեղափոխության և իրար փոխարինող օտարերկրյա իմպերիալիստների տիրապետության տակ հեծող Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի աշխատավոր դանգվածների ազատագրական պայքարին օգնության կազմակերպումը։ Սովետական Ռուսաստանի արտաքին քաղաքական բոլոր ակտերը, որոնք առնչվել են Անդրկովկասի հետ, նախ և առաջ բխել են այդ երկրամասի ժողովուրդների ազգային ու սոցիալական շահերի պաշտպանությունից։ Այս առումով Անդրկովկասի ժողովուրդներն առաջին հերթին պարտական են Վ. Ի. Լենինին։

1918—1920 թթ., երբ Անդրկովկասյան կոմիսարիատն ու սեյմը և ապա բուրժուական հանրապետությունների կառավարությունները երկրամասը վեր էին ածել իմպերիալիստական պետությունների վայրենի կամայականությունների թատերաբեմի, սովետական Ռուսաստանի կառավարությունն իր ամբողջ գործունեությամբ ձգտում էր պաշտպանել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը, փոկել նրանց ֆիզիկական ոչնչացման և գաղութացման իրական վտանգից։

Անհրաժեշտ է հիշել, որ իմպերիալիստական երկրների 1918—1920 թթ. ինտերվենցիան շատ թանկ է նստել սովետական երկրի վրա։ Նյութական վնասներն անցնում են 40 միլիարդ ռուբլուց (ոսկով)։ Իսկ մարդկային զոհերի թիվը պաշտոնական ոչ լրիվ տվյալներով կազմում է 1 մլն. 203 հազ., չհաշված 771 հազ. հաշմանդամ դարձած մարդկանց[15]։ Այս գնով է սովետական ժողովուրդը պաշտպանել Հոկտեմբերի նվաճումները։

Դեռ չէին չորացել Թուրքական լաթաղանից լցված միլիոնավոր հայոր-

[14] «Документы внешней политики СССР» (այսուհետև՝ ДВП СССР), т. I, М., 1959, с. 78.

[15] ДВП СССР, т. V, М., 1961, с. 346—349; т. VII, М., 1963, с. 244—246, 702.

դիների հրաշքով փրկված, բայց որբացած երեխաների ու այրիացած կանանց արցունքները, երբ 1918 թ. գարնանը թուրքական բարբարոսները ներխուժեցին Արևելյան Հայաստան, որպեսզի արևելահայերին ևս բնաջնջեն երկրի երեսից։ Եվ բնաջնջում էին։ «Թուրքական զորքերի և քրդերի առաջխաղացումը Կովկասյան ճակատում,— ասվում էր սովետական կառավարության 1918 թ. ապրիլի 18-ի բողոքի նոտայում,— ուղեկցվում է հայ ժողովրդի մասսայական բնաջնջմամբ։ Խաղաղ բնակչությունը, կանայք և երեխաները կոտորվում են հազարներով, նրանց գույքը թալանվում և հրկիզվում է... Այն, ինչ կատարվում է այս շրջաններում, վկայում է, որ տասնյակ տարիներ կիրառվող հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը շարունակվում է նաև այժմ»[16]։

Իմպերիալիստական աշխարհի գիշատիչները խուլ մնացին մեր ժողովրդի ողբի և կոյր՝ նրա զրկանքների նկատմամբ։ Միայն Սովետական Ռուսաստանի կառավարությունն էր, որ Վ. Ի. Լենինի անմիջական ցուցումով ամենավճռական բողոքի ձայն բարձրացրեց և թուրքերի օկուպացրած մարզերի բնակչության ազատ ինքնորոշման իրավունքները հայտարարեց չոգտագործված։ Այս նշանակում էր, որ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը մնում էր կանգնած «Թուրքահայաստանին» ազատ ինքնորոշման մասին լենինյան դեկրետի հռչակած սկզբունքների դիրքերում։ Սովետական Ռուսաստանի կառավարությունը միաժամանակ չճանաչեց Անդրկովկասյան սեյմի կողմից երկրամասը «անկախ» հայտարարելու ակտը, որը բացում էր Կովկասի դռները թուրքական օկուպանտների առաջ և սպառնում սովետական Բաքվին։

Վ. Ի. Լենինը բացառիկ նշանակություն էր տալիս Բաքվում սովետական իշխանության ամրապնդմանը և՝ իր խորհուրդներով ու ցուցումներով. Կոմունային ցույց տրված ռազմական ու նյութական օժանդակությամբ օգնում էր երկրամասի աշխատավորներին՝ ամրապնդելու և ընդլայնելու սովետական իշխանությունն ամբողջ Անդրկովկասում։

Բաքվի Կոմունայի պարտությունը, որ հետևանք էր երկրամաս ներխուժած գերմանա-թուրքական և անգլիական զորքերի կողմից ազգայնական հակահեղափոխությանը ցույց տրված օգնության, շատ թանկ նստեց Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի աշխատավորների վրա։ Առժամանակ մարեց սովետական իշխանության ճրագն Անդրկովկասում։

Իշխանությունը գավթած մուսավաթականները, վրաց մենշևիկներն ու դաշնակցականները ստեղծեցին իրենց բուրժուական «անկախ» հանրապետությունները։ Պատերազմում գերմանա-թուրքական բլոկի պարտությունից հետո երկրամասն ընկավ ԱՄՆ-ի և Անտանտի իմպերիալիստների տիրապետության տակ։ Գնահատելով այդ երկրների քաղաքականությունն Անդրկովկասում, ամերիկյան քաղաքական գործիչ Հ. Ֆիշերը գրել է. «Անդրկովկասը իր նավթային ու հանքային հարստություններով մի ավար էր, որի համար կես դյուժին ազգերի գինված ուժերը կռվում էին ինչպես շունը մի կտոր ոսկրի համար, իսկ երկրամասի դժբախտ բնակչությունը ցարական իշխանության տապալումից հետո համարյա չուներ խաղաղություն և անվտանգություն»[17]։

---

[16] ДВП СССР, т. I, с. 240—241.

[17] H. Fisher, The Famine in Soviet Russia 1919—1923, N.—Y., 1927, p. 282.

Այս ամենի հետևանքով Անդրկովկասում ազգային հարաբերությունները հասան մինչ այդ չտեսնված սրության։ «Անկախ» հանրապետությունների փոխարեն,— գրել է Ա. Միկոյանը 1919 թ.,— Կովկասում ստացվեց մեծ ճանապարհի վրա գտնվող մի քարվանսարահ, ավազակների մի կեղտոտ որջ, որտեղ մերթ հերթով, մերթ միասին մտնում էին իմպերիալիզմի գիշատիչները՝ քաղաքակիրթ բանդիտները, մերթ գերմանացիները, մերթ թուրքերը, անգլիացիները, ամերիկացիները, իտալացիները և ամեն տեսակ այլ սրիկաներ, գալով տերուտնօրինություն են անում, կողոպտում, բռնություններ գործում և բավականաչափ ծաղրուծանակի ենթարկելով աշխատավոր մասսաներին, հեռանում են հարուստ ավարով, որպես երախտապարտություն թքելով որջը պահողների՝ կովկասյան հանրապետությունների ուխին, որոնք, ղրկվելով որոշ տերերից, ինչպես անվայել պրոֆեսիայի տեր կանայք, փնտրում են նոր տերեր»[18]։

Անդրկովկասի ժողովուրդների պատմության այս մղձավանջային տարիներին, Վ. Ի. Լենինը, զբաղված լինելով աշխարհում առաջին սոցիալիստական պետության ստեղծման ու ամրապնդման, օտարերկրյա իմպերիալիստների ռազմական ինտերվենցիայից և սպիտակգվարդիական բանդաներից սովետական իշխանության պաշտպանության, միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման ղեկավարման բարդ ու համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող գործերով, այդուհանդերձ անընդհատ մտահոգվում էր Անդրկովկասի ժողովուրդների ազգային ու սոցիալական ազատագրման խնդիրներով։ Անդրկովկասի նկատմամբ 1918—1920 թթ. Սովետական Ռուսաստանի ամբողջ քաղաքականությունը կապված է անձամբ Վ. Ի. Լենինի անվան հետ։ Նա է որոշել սովետական իշխանության համար երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների մղած պայքարի ստրատեգիան և տակտիկան, նրան է պատկանում Անդրկովկասում անկախ սովետական հանրապետություններ, Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ինքնուրույն կոմունիստական կուսակցություններ ստեղծելու անհրաժեշտության գաղափարը։ Միայն 1918 թ. ապրիլից 1920 թ. հունվար ամիսները ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն և կազմբյուրոն, անձամբ Վ. Ի. Լենինի մասնակցությամբ, ավելի քան 20 անգամ քննարկել են այդ հարցերը։ Վ. Ի. Լենինն է որոշել Անդրկովկասում կիրառվելիք ազգային քաղաքականության սկզբունքները։

Այս շրջանում՝ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից մինչև երկրամասում սովետական կարգերի հաղթանակը, Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը կրում էր սոցիալիստական շարժման բնույթ, միաձուլվել էր սովետական իշխանության համար մղվող ընդհանուր պայքարին և իր սուրբյամբ ուղղվել օտարերկրյա իմպերիալիստների և ազգայնական հակահեղափոխության դեմ. Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարն ավարտվեց երկրամասում սովետական իշխանության հաղթանակով։ Հարցի այս յուրօրինակության վրա մեր պատմագրությունը ցայսօր պատշաճ ուշադրություն չի դարձրել, մինչդեռ ազգայնական պատմագրությունը բուրժուական «անկախ» հանրապետությունների ստեղծումը համարում է ազգային-ազատագրական պայքարի հաղթական վախճան։

[18] ՍՄԿԿ ԿԿ-ին առընթեր ՄԼԻ-ի ազրոնչանական մասնաճյուղի կուսարխիվի պատճենների ֆոնդ, գ. 39, թ. 2։

Փաստերն անհերքելի վկայում են, որ առանց սովետական Ռուսաստանի ռազմական, քաղաքական ու դիվանագիտական ամենաակտիվ միջամտության և օգնության, Անդրկովկասի ժողովուրդները չէին կարող հաղթահարել իմպերիալիզմի դիմադրությունը, կլրկվեին ոչ միայն սոցիալիստական ազգային պետականություն ստեղծելու հնարավորությունից, այլև կկորցնեին եղած բուրժուական պետականությունը և Անդրկովկասը կվերածվեր Անտանտի իմպերիալիստների ու Թուրքական զավթիչների գաղութի։ Այդ նպատակն էին հետապնդում քեմալականները, երբ 1920 թ. աշնանը պատերազմ սանձազերծեցին Հայաստանի դեմ։ Բուրժուական և բուրժուա-ազգայնական գաղափարախոսները մինչև այսօր էլ կեղծում են պատմությունը, ձգնելով «ապացուցել», որ քեմալականների հարձակումը Հայաստանի վրա կատարվել է սովետա-Թուրքական իբր թե 1920 թ. օգոստոսին կնքած ինչ-որ գաղտնի պայմանագրի հիման վրա և նպատակ է հետապնդել տապալել դաշնակցականների կառավարությունը ու երկրում հաստատել սովետական իշխանություն։ Նրանք «մոռացության» են տալիս 1920 թ. Մայիսյան հերոսական ապստամբությունը, որն արդեն տապալված էր հայտարարել դաշնակցականների կառավարությունը և, եթե չլիներ իմպերիալիստների օգնությունը, այն այլևս հարություն առնել չէր կարող։

Իրողություն է, սակայն, որ 1920 թ. ամռանը Մոսկվայում վարվող բանակցությունների ժամանակ, երբ պարզվեց, որ Թուրքերի հակահայկական ակնկալությունները պաշտպանություն չեն գտնում սովետական կառավարության կողմից, «Թուրքական կառավարությունը,— ինչպես այդ մասին հայտարարեց Գ. Չիչերինը սովետների VIII համագումարում,— որոշեց զորդյան հանգույցը կտրել սրով»[19]։ Թուրքական զորքերը ներխուժեցին Հայաստան։ Վ. Ի. Լենինը հոկտեմբերի 9-ին կուսակցության Մոսկվայի կազմակերպության ակտիվի խորհրդակցությունում, խորապես բացահայտելով խնդրի բարդությունը, նշեց. «Վերջերս Թուրքերը հարձակում են սկսել Հայաստանի վրա. նպատակ ունենալով գրավել Բաթումը, իսկ հետո կարող է և Բաքուն։ Հասկանալի է, որ մենք այդ հարցում պետք է հանդես բերենք առավելագույն զգուշություն»[20]։ Ինչպես տեսնում ենք, Թուրքերի հարձակումը Հայաստանի վրա Վ. Ի. Լենինը դիտում էր ոչ միայն որպես հակահայկական, այլ առավել հակասովետական ակտ, ուղղված Սովետական Ադրբեջանի ու Ռուսաստանի դեմ։

Ելնելով Վ. Ի. Լենինի ցուցումներից, Գ. Չիչերինը հոկտեմբերի 14-ի հեռագրում խիստ վտանգավոր համարելով քեմալականների ավանտյուրան, առաջարկում է Հայաստանում Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Ի. Լեգրանին՝ հետևողականորեն ստեղծել խաղաղության քաղաքականություն, խստագույն զգուշություն հանդես բերել քեմալականների և դաշնակցականների նկատմամբ, որպեսզի Անդրկովկասում լուրջ ճգնաժամ չառաջանա և Անտանտը Սովետական Ռուսաստանին չներգրավի պատերազմի մեջ։ Ի. Լեգրանին հղած մի այլ հեռագրում Գ. Չիչերինն ընդգծում էր, որ Թուրքերի նկատմամբ Անտատի և վերջինիս նկատմամբ Թուրքական նացիոնալիստների քաղաքականության մեջ տեղի է ունենում խոշոր շրջադարձ և որ այդ պատճառով

[19] ДВП СССР, т. II, М., 1958, с. 727.
[20] «Ленинский сборник», т. XXXVI, с. 131.

մեր յուրաքանչյուր քայլը անհրաժեշտ է խիստ կշռադատել։ Ավելին, Հայաստանում Թուրքական զորքերի առաջխաղացումը դադարեցնելու նպատակով սովետական կառավարությունը զգուշացնում էր բնմալականներին, որ նրանց ցույց տրվող ռազմական օգնությունը կդադարեցվի, քանի որ հակառակ պայմանավորվածության, արևմտյան ռազմաճակատի համար հատկացվող զենքը օգտագործվում է հայերի դեմ։ Շուտով հայտնի է դառնում, որ քեմալականներն իրենց գործողություններն Անդրկովկասում համաձայնեցնում էին Անտանտի կառավարությունների հետ։

Արևմտյան իմպերիալիստները պատերազմի՝ իրենց համար ցանկալի ելքի դեպքում մտադիր էին Հայաստանը պաշտպանելու պատրվակով զորք մտցնել Անդրկովկաս։ Հենց այդ նպատակով էլ անգլիական կոմիսար Ստոքսը ժամանել էր Երևան, իսկ Թիֆլիսում համաձայնագիր էր կնքել մենշևիկյան կառավարության հետ՝ նրան ռազմական փոխառություն տալու և Բաթումը 15 տարով վարձակալելու մասին։ Այսպիսի պայմաններում Վ. Ի. Լենինը անհրաժեշտ էր համարում ռազմական օժանդակ ուժեր կենտրոնացնել Անդրկովկասում՝ պատերազմից խուսափելու և հնարավոր պրովոկացիաների դեմն առնելու նպատակով[21]։

Ստեղծվում էր նոր ռազմաճակատ։ Սովետական Ռուսաստանի դեմ, երբ դեռևս պատերազմը շարունակվում էր պանական Լեհաստանի հետ։ Հոկտեմբերի 14-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն, Վ. Ի. Լենինի մասնակցությամբ, որոշում ընդունեց համաձայնվել Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Կովկասյան բյուրոյի կարծիքի հետ՝ Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների անհրաժեշտության մասին և քաղաքական օգնություն ցույց տալ նրան՝ Թուրքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու համար[22]։

Թուրքերի կողմից հայերին սպառնացող նոր ջարդի պայմաններում, երբ պարզից էլ պարզ էր, որ հայ ժողովրդի փրկության միակ ուղին Սովետական Ռուսաստանի հետ սերտ դաշինքի մեջ է, դաշնակցականները իրենց պաշտոնական օրգան «Հառաջ» հոկտեմբերի 20-ի համարում կոչ էին անում ժողովրդին. «Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և երկար ժամանակ ապահովել իր պետական ու ֆիզիկական գոյությունը, ապա նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ Թուրքական օրիենտացիա»։ Հրեշավոր է, բայց փաստ է։ Դրան համապատասխան դաշնակցական կառավարությունը մերժեց Սովետական Ռուսաստանի առաջարկը՝ Թուրքիայի և Հայաստանի միջև միջնորդի դեր կատարելու մասին, հնարավորություն տալով Թուրքերին՝ մոտենալու Երևանի մատույցներին։ Օրհասական այս ժամին Հայաստանի կոմունիստական կուսակցությունը իր վրա վերցրեց սնփական ժողովրդի փրկության պատասխանատվությունը և ապստամբության կոչեց նրան։ Ոտքի ելած Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին, նրանց իսկ խնդրանքով, օգնության եկան 11-րդ Կարմիր բանակի զինվորները։ Դաշնակցական կառավարությունը տապալվեց։ 1920 թ. նոյեմբերի 29-ին հայոց լեռնաշխարհում վեր խոյացավ սովետների ալ դրոշը։

Մինչ ապստամբ ժողովուրդը Հայաստանի Հեղափոխական կոմիտեին էր

[21] В. И. Ленин, ПСС, т. 52, с. 14.
[22] В. И. Ленин, ПСС, т. 54, с. 717.

դիմավորում, դաշնակցական տապալված կառավարության նախկին պրեմիերը Թուրքերի կողմից օկուպացված Ալեքսանդրապոլում նրանց հետ մեր ժողովրդին մեծ դառնություններ բերող անօրեն պայմանագիր էր ստորագրում։ Դա 1920 թ. դեկտեմբերի 2-ին էր։ «Այդ պայմանագիրը,— ինչպես նշել է Գ. Չիչերինը,— չճանաչվեց ո՛չ Սովետական Հայաստանի, ո՛չ էլ Միութենական Ռուսական Հանրապետության կողմից, և նրա չեղյալ հայտարարելը դարձավ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հետագա բանակցությունների գլխավոր առարկաներից մեկը»[23]։

Առաջ անցնելով նշենք, որ վրաց մենշևիկները ևս իրենց հոգևարքի ժամանակ դիմեցին նման քայլի. 1921 թ. մարտի 11-ին համաձայնություն տվեցին Թուրքերին օկուպացնելու Բաթումը։ Կարմիր բանակի կողմից մարտի 18-ին Բաթումի գրավումը ձախողեց Թուրքերի և մենշևիկների գործարքը։

Օգտվելով դաշնակցականների դավաճանական այդ քայլից, քեմալականները ոչ միայն իրենց ղորքերը դուրս չէին բերում օկուպացված տերիտորիաներից, այլև ձգտում էին նվաճել ամբողջ Արևելյան Հայաստանը։

Քեմալականների՝ Հայաստանում կատարած ագրեսիան, բռնություններն ու կոտորածը վկայող փաստերի լույսի տակ առնվազն արտառոց է հնչում անգլիական պատմաբան լորդ Կինռոսի ցինիկ պնդումը, թե, ի տարբերություն Հիտլերի և Մուսոլինիի դիկտատուրայի, քեմալական դիկտատուրան «խորապես խաղաղասիրական էր և որևէ երկրի նկատմամբ չի հայտարարել ոչ քաղաքական և ոչ էլ տերիտորիալ պահանջներ»[24]։ Թուրքական ժամանակակից բուրժուական պատմագրությունից փոխառնված այս կոնցեպցիան լայն տարածում է գտել անգլո-ամերիկյան բուրժուական գրականության մեջ։

Սովետական Հայաստանը կուլ կգնար քեմալականների այդ «խաղաղասիրական» քաղաքականությանը եթե չլիներ Սովետական Ռուսաստանի հզոր օգնությունը։ Դեկտեմբերի 13-ին Վ. Ի. Լենինն ընդունում է Սովետական Հայաստանի պատվիրակությանը, որը տեղեկացնում է նրան հայ ժողովրդի համար ստեղծված ծանր վիճակին։ Նույն օրը երեկոյան Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ Ժողկոմխորհը որոշում է ընդունում Սովետական Հայաստանին բաց թողնել 3 միլիարդ ռուբ. վարկ։ Հաջորդ օրը Վ. Ի. Լենինը գրում է Չիչերինին. «Ընկ. Չիչերին. երեկ ինձ մոտ էր Տեր-Գաբրիելյանը, որը նույնպես խոսում էր ջարդի ահավոր վտանգի մասին... կարծում եմ անհրաժեշտ է... ամեն կերպ օգնել» Հայաստանին[25]։ Այս նամակը վկայում է (ուշադրություն դարձնենք «նույնպես» բառին), որ Վ. Ի. Լենինը մինչ այդ էլ տեղյակ էր հայերին սպառնացող ջարդի մասին։ Գիտական շրջանառության մեջ դրված արխիվային մի փաստաթղթից պարզ է դառնում, որ այդ մասին նրան տեղյակ էր պահել Գ. Չիչերինը, որին Վ. Ի. Լենինը հանձնարարել էր տեղեկանք պատրաստել հայերին սպառնացող ջարդի և հայ գաղթականների վիճակի մասին։ Դեկտեմբերի 14-ին Գ. Չիչերինը, վերլուծելով Թուրքական ներխուժման հետևանքով Անդրկովկասում ստեղծված վիճակը, գրում է Վ. Ի. Լենինին. «Այնքանով, որքանով խոսքը վերաբերում է հայ բնակչությանն ընդհանրապես, ապա մեր ամբողջ գործունեությունն այդ ուղղությամբ, ինչպես Ձեզ

23 Г. В. Чичерин, Статьи и речи, М., 1961, с. 196.
24 Lord Kinros, Ataturk. The Riborth of nation, London, 1964, p. 231, 458.
25 В. И. Ленин, ПСС, т. 52, с. 33.

հայտնի է, նպատակ ունի կանգնեցնել թուրքերի հետագա հարձակումը և ստիպել նրանց ետ քաշվել Արփաչայի այն կողմը... Դուք գիտեք, որ թուրքերին զենք տալը մենք կապել ենք թուրքերի՝ Արփաչայի այն կողմը հասնելու պահանջի հետ: Մենք կարող էինք ավելին, երբ հնարավոր լիներ Հայաստան ուղարկել ավելի շատ զորք»[26]:

Այս փաստաթուղթը մեկ անգամ ևս մերկացնում է պատմության բոլոր տիպի կեղծարարներին, որոնք փորձում են Սովետական Ռուսաստանի արևելյան քաղաքականության մեջ ինչ-որ «հակահայկական տարր» որսալ: Վ. Ի. Լենինը, ավելի քան մեկ ուրիշը, շատ լավ էր հասկանում քեմալականների ագրեսիվ քաղաքականության բնույթը: 1920 թ. դեկտեմբերի 21-ին, ելույթ ունենալով սովետների 8-րդ համագումարի ՌԿ(բ)Կ ֆրակցիայի փակ նիստում, Վ. Ի. Լենինը հայտարարեց. «Թուրքական հարձակումը մեր դեմ էր ուղղված. Անտանտը մեզ համար փոս էր փորում և ինքն էլ ընկավ այնտեղ, որովհետև մենք ձեռք բերեցինք Սովետական Հայաստան:

Թուրքիան ղեկավարում են կադետները, օկտյաբրիստները, նացիոնալիստները, որոնք պատրաստ են մեզ Անտանտին ծախելու»[27]:

Սա է Վ. Ի. Լենինի գնահատականը՝ տրված ֆեմալի այդ ժամանակ վարած քաղաքականությանը: Սակայն լենինյան այդ գնահատականը չի կարելի շփոթել այն անկեղծ ձգտման հետ, որ հանդես էր բերում Վ. Ի. Լենինը և այսօր էլ հանդես է բերում սովետական կառավարությունը՝ Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու և պահպանելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է 1921 թ. մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրով Հայաստանի տերիտորիալ հարցերի լուծմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ այդ բանակցություններն ընթանում էին դաշնակցականների փետրվարյան ավանտյուրայի շրջանում, երբ Երևանը գտնվում էր նրանց ձեռքում և երբ նրանք հայտարարել էին Թուրքիային, որ համաձայն են կիրառման մեջ դնել Ալեքսանդրապոլի տխրահռչակ պայմանագիրը: Այդ պատճառով էլ, չնայած մարտի 16-ի պայմանագրի ստորագրմանը, թուրքերը համառորեն կառչել էին Ալեքսանդրապոլի պայմանագրից: Երբեք չպետք է մոռանալ Ալեքսանդր Մյասնիկյանի քաղաքական կարևորագույն նշանակություն ունեցող հայտարարությունը այդ կապակցությամբ: «Տաճիկների հետ,— նշել է նա,— ավելի հաջող պայմաններ կարող էինք կապել: Բայց չարագործները խանգարեցին: Եթե չլիներ դաշնակների վերջին ավանտյուրան, մենք այժմ ավելի լայն սահմաններ կունենայինք»[28]: Այստեղ, իրոք, մեկնաբանություններն ավելորդ են:

Սովետա-թուրքական մարտի 16-ի պայմանագրով Ալեքսանդրապոլը և նրա շրջակայքը մնում էր Սովետական Հայաստանի կազմում: Չնայած դրան, թուրքերը հրաժարվում էին այն վերադարձնել Սովետական Հայաստանին և ձգտում էին պատերազմ սանձազերծել Սովետական Հայաստանի դեմ: Սովետական կառավարությունը վճռականապես հայտարարեց թուրքերին, որ «Թուրքիայի և Սովետական Հայաստանի միջև պատերազմը կնշանակի պատերազմ Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև»[29]: Միայն այս հայտարարու-

---

26 Գ. Գալոյան, Հանուն պատմական ճշմարտության («Լենինյան ուղիով», 1967, № 7, էջ 76):

27 В. И. Ленин, ПСС, т. 42, с. 125.

28 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 336:

29 ДВП СССР, т. IV, М., 1960, с. 50.

թյունից, ինչպես նաև 11-րդ Կարմիր բանակի հրամանատարի կողմից տրված ուլտիմատումից հետո Կարարեքիր փաշան իր զորքերով հեռացավ Ալեքսանդրապոլից։ Այսպիսով, չնայած Հայաստանում սովետական իշխանության հաստատմանը, հայ ժողովուրդը դեռևս գտնվում էր ֆիզիկական բնաջնջման ռեալ վտանգի տակ։ Միայն Սովետական Ռուսաստանի և Լենինի գործադրած հսկայական ջանքերի հետևանքով մեր ժողովուրդը փրկվեց այդ վտանգից։

Բացառիկ է Վ. Ի. Լենինի դերը Անդրկովկասի սովետական նորաստեղծ հանրապետությունների միջազգային դիրքերի ամրապնդման, նրանց ռազմաքաղաքական ու տնտեսական ջանքերի միավորման, երկրամասում ազգային հարցի լուծման ու սոցիալիզմի հիմքերի կառուցման գործում։

ԱՄՆ-ի և Անտանտի իմպերիալիստներն այդքան հեշտությամբ չէին ուզում հրաժարվել Անդրկովկասը գաղութացնելու իրենց փայփայած պլաններից։ 1921—1924 թթ. ԱՄՆ-ի կոնգրեսը բազմիցս անդրադարձել է «հայկական հարցին», դրա տակ հասկանալով Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի՝ վերանվաճումը։ Իրենց զենքերը վայր չէին դրել նաև տապալված բուրժուական նացիոնալիստները, որոնց պարագլուխները ապաստան գտնելով հարևան երկրներում, ծառայության մեջ էին մտել իմպերիալիզմին։ 1921 թ. կեսերին նրանք Փարիզում փորձեցին ստեղծել այսպես կոչված «Անդրկովկասյան միություն», նպատակ դնելով միացյալ ուժերով տապալել սովետական իշխանությունը։

Հայտնի է, որ 1921 թ. մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրով Թուրքիային անցավ ռուսական նախկին կայսրության տերիտորիայից 24 հազ. քառ. կմ տարածություն՝ ավելի քան կես միլիոն բնակչությամբ։ Սովետական Ռուսաստանը ճանաչեց Թուրքիայի անկախությունը և բոլոր միջոցներով օգնում էր այն պաշտպանելու։ Չնայած այս ամենին, թուրքական նացիոնալիստները չէին դադարում դավեր լարել սովետական Անդրկովկասի դեմ։ Նրանք տեռորի ու ծաղրուծանակի էին ենթարկում զավթած տերիտորիաների բնակչությանը։ Վ. Ի. Լենինը, իմանալով այդ մասին, հանձնարարեց Գ. Օրջոնիկիձեին՝ «ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները» այդ սանձարձակությունները կանխելու և անհապաղ տեղյակ պահելու իրեն[30]։

Քեմալը ձգտում էր Թուրքիայի և անդրկովկասյան սովետական հանրապետությունների միջև նախատեսվող բանակցություններն անցկացնել յուրաքանչյուրի հետ անջատ, որպեսզի հնարավորություն ունենար ճնշում գործադրելով նրանց վրա, նոր զիջումներ ստանալ նրանցից։ Անդրկովկասի հանրապետությունների նկատմամբ Սովետական Ռուսաստանի հզոր պաշտպանությունը ի չիք դարձրեց Թուրքիայի այդ ձգտումները։

Արևելքում իրենց հակասովետական գործունեությունն ակտիվացրել էին Անգլիան ու Ֆրանսիան։ Նրանք իրենց հովանավորության տակ էին վերցրել Զանգեզուրից փախած Նժդեհի բանդաներին, որոնք Թավրիզում ստեղծել էին իրենց այսպես կոչված «Հայրենիքի փրկության կոմիտեն»։ 1921 թ. սեպտեմբերի 30-ին սովետական կառավարությունը վճռականորեն պահանջեց ցրել այդ ինքնակոչների «կոմիտեն» և դադարեցնել պրովոկացիաները։ Իրանի տերիտորիայում գործում էին նաև մուսավաթական բանդաներ, որոնք զինված ներխուժումներ էին կատարում Սովետական Ադրբեջանի տերիտորիա։

---

[30] В. И. Ленин, ПСС, т. 52, с. 109

Անգլիական մամուլը կեղծ լուրեր էր սարածում սովետա-թուրքական սահմանի վրա սովետական զորքեր կուտակելու մասին։ Թուրքիան գաղտնի բանակցություններ էր վարում Անգլիայի և Ֆրանսիայի հետ։ Իմպերիալիզմի կառքին էին լծվել 2-րդ Ինտերնացիոնալի լիդերները, որոնք իրենց պաշտպանության տակ էին առել վրաց մենշևիկներին և պահանջում էին սովետական զորքերը դուրս բերել Վրաստանից ու այնտեղ անցկացնել հանրաքվե։ 1921 թ. պեկտեմբերի 24-ին Լ. Կրասինը Լոնդոնից հաղորդում էր Չիչերինին, որ «Բրիանին հաջողվել է շահագրգռել անգլիական կառավարությանը՝ հենվելով Թուրքիայի վրա ետ խլել Անդրկովկասը», որ Թուրքիան նոր զորքեր է կուտակում արևելյան ռազմաճակատում։ Շուտով հայտնի դարձավ նաև, որ Մոսկվայում Թուրքիայի դեսպանության աշխատողները հակասովետական լրտեսությամբ էին զբաղվում, որի պատճառով սովետական կառավարությունը պահանջեց ետ կանչել դեսպան Ալի Ֆուադին[31]։

Անդրկովկասի հանրապետությունների համար ստեղծված միջազգային այսպիսի բարդ պայմաններում էր տեղի ունենում սովետական նորաստեղծ հանրապետությունների տնտեսական ու քաղաքական վերածնության պրոցեսը։ Այս շրջանում Վ. Ի. Լենինը մեծ ջանքեր էր գործադրում Անդրկովկասը տնտեսական փլուզումից դուրս բերելու և սոցիալիստական էկոնոմիկայի հիմքերը ստեղծելու ուղղությամբ։ 1921 թ. ապրիլի 9-ին Վ. Ի. Լենինը, ստանալով Գ. Օրջոնիկիձեի ծածկագիր հեռագիրը Անդրկովկասի պարենային հուսահատ դրության մասին, պատասխան հեռագրում գրում էր. «Համառորեն պահանջում եմ ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մարզային տընտեսական օրգան[32]։ Իսկ ապրիլի 14-ին «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» գրած նամակում, որը Անդրկովկաս բերեց Սովետական Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ նշանակված Ալ. Մյասնիկյանը, Վ. Ի. Լենինը կոմունիստների առաջնահերթ խնդիրն էր համարում Կովկասի տարբեր ազգությունների, բանվորների և գյուղացիների միջև ազգային խաղաղության ամրապնդումը։ Վ. Ի. Լենինը հույս էր հայտնում, որ Կովկասի սովետական հանրապետությունների «սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուադիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[33]։

Վ. Ի. Լենինի այս նամակը, որտեղ շարադրված էին նրա ցուցումներն ու խորհուրդները անցման ժամանակաշրջանում Կովկասի առանձնահատկությունները հաշվի առնելու վերաբերյալ, Անդրկովկասում նոր կյանք ստեղծելու ծրագրային փաստաթուղթ էր։ Սովետական Ռուսաստանի Ժողկոմխորհը, Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ, միաժամանակ ընդունեց մի շարք որոշումներ ուղղված երկրամասի արտադրողական ուժերի զարգացման, նավթի և քամբակի արտադրության ավելացման, ոռոգման սիստեմի ստեղծման, բանվորների ու գյուղացիների վիճակի բարելավման նպատակներին։ Վ. Ի. Լենինը սովետական կենտրոնական մարմիններից պահանջում էր անդադրում հետևել այդ որոշումների կատարմանը և մշտապես իրեն կուրսի մեջ պահել։

---

31 ДВП СССР, т. IV, с. 594, 603—604; т. V, с. 274—276, 379.

32 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 521։

33 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 402։

Անդրկովկասի հանրապետությունների ռազմական և տնտեսական ռանքերի միավորումը ցանկալի արդյունքը չէր կարող տալ, առանց նրանց քաղաքական սերտ դաշինքի։ Այդ պատճառով էլ Վ. Ի. Լենինը Անդրկովկասի հանրապետությունների ֆեդերացիայի ստեղծումը համարում էր ասկդրունքորեն բացարձակապես ճիշտ և անսպասման իրագործման ենթակա խնդիր[34]։ Լենինյան այդ դաղափարը միահամուռ հավանություն գտավ երկրամասի կոմունիստական կազմակերպությունների, սովետների, բանվորների ու գյուղացիների կողմից։ Անդրկովկասյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության ստեղծումը և նրա մտնելը ՍՍՀՄ-ի կազմի մեջ (1922 թ. դեկտեմբեր) պատմական խոշորագույն նշանակություն ունեցավ։ Այն անփոխարինելի դեր խաղաց երկրամասի ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիզմի կառուցման, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական հանրապետությունների միջազգային դիրքերի կայունացման, երկրամասի ժողովուրդների եղբայրական դաշինքի ամրապնդման գործում։ ՍՍՀՄ-ի ստեղծումը մեծ Լենինի ինտերնացիոնալ գաղափարների մեծագույն հաղթանակն էր։ Նրա տասարտասնամյա պատմական խոշորագույն նշանակությունը անժխտելի է։

Յուրաքանչյուր ժողովուրդ՝ առանձին վերցրած, և մարդկությունը՝ իր ամբողջությամբ, ուրույն կերպով են պարտական Վ. Ի. Լենինին՝ դարերի մաստությունն իր մեջ մարմնավորած և գալիք դարերի ճամփաները լուսավորող այդ հանճարին։ Վ. Ի. Լենինը մերն է և ամբողջ աշխարհինը։ Հայի համար Վ. Ի. Լենինի անունը մեր ժողովրդի տարատևության, նրա դարավոր ազատագրական պայքարի հաղթանակը մարմնավորող խորհրդանիշ է։ Մեզ վերածնող լուսաբաց դրոշին հավատարիմ մնալը մեր ազգային արժանապատվությունն ու պարտքն է։

В. И. ЛЕНИН И ЗАКАВКАЗЬЕ

ГАЛУСТ ГАЛОЯН
Член-корр. АН Арм. ССР

Резюме

В. И. Ленин с первых же дней своей политической деятельности стал уделять огромное внимание развитию рабочего и национально-освободительного движения народов Закавказья как части общероссийского революционного движения.

На примере Закавказья еще раз подтверждается высказанная В. И. Лениным мысль о том, что национальные движения угнетенных народов России поднимались в связи с рабочим движением, что ни один из малых народов России не мог разрешить задачи своего национально-освободительного движения без тесной связи с общероссийским освободительным движением.

В. И. Ленин придавал огромное значение созданию социал-демократических организаций в Закавказье, своими советами и указаниями помогал их работе. В. И. Ленин восхищался интернациональными тра-

[34] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 136։

дициями рабочего класса Закавказья и ставил их в пример для пролетарского разрешения национального вопроса.

После победы Великой Октябрьской Социалистической революции, по известным внешним и внутренним причинам, в Закавказье власть захватили в свои руки буржуазные националисты. В 1917—1920 гг. национально-освободительное движение народов Закавказья носило социалистический характер, слившись с борьбой за советскую власть.

В. И. Ленину принадлежит идея создания отдельных советских республик Закавказья и самостоятельных коммунистических партий Армении, Грузии и Азербайджана.

Торжеством великих интернациональных идей Ленина, триумфом национальной политики Коммунистической партии явилось образование Союза ССР.